

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գ. ԶԱՀՈՒԿՑԱՆ

Ազգը

5-րդ դարից հանդիպող այս բառը բացի բուն «ազգը» իմաստից ուշ շրջանում գործածվել է նաև «շալակ, ուս» իմաստով: Ազգը գրության կողքին հանդիպում է նաև աստը գրությունը (հմմտ. ազրն—ասպն):

Եթե մի կողմ թողնենք հուն. γαστήρ «որովայն» բառի հետ կապելու (Հյունքարպեյենության) և հ.-ե.*memso- «միս» արմատից բխեցնելու (Պատրուբանի) փորձերը, որոնք ակնհայտորեն զուրկ են գիտական արժեքից, ապա կարելի է կանգ առնել Ա. Մեյեի ստուգաբանության վրա, որ ընդունում է Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1², էջ 86): Ըստ Ա. Մեյեի (MSL, 10, էջ 277) և Հ. Աճառյանի (ՀԱԲ, 1², էջ 86)՝ հայ. ազգը-ը ստուգաբանորեն կապված է հ. հնդկ. śakthi-, -nas, ավեստ. haxti- «աճուկ» և հուն. ἰσχή, ἰσχίον «ազգը, բարձր» բառերի հետ. «Արիական լեզուների նախաձևն է *sakth-,— գրում է Հ. Աճառյանը,— որի դիմ հայը ձայնավորի շրջմամբ և բաղաձայնների թրթռացումով հանում է azqdh-, ուր ց կրճատվելով՝ azdh-. հոլովման և ր վերջավորության համար հմմտ. ոսկր=սանս. ásthi, asthnás»: Ավելի ուշ Ա. Մեյեի (MSL, 23, էջ 259—260) *az(g)dh- նախաձևը կապում է հ.-ե. *ost(h)- «ոսկր» բառի հետ՝ նշելով հ. հնդկ. ásthi- «ոսկր» և śakthi «ազգը, սրունք» բառերի զուգահեռությունը: Ընդհակառակն, հնչյունական հիմունքով Հ. Պեդերսենը մերժում է ազգը բառը «ոսկր» նշանակող բառերի հետ համեմատելու հնարավորությունը²:

Հայերեն ազգը բառը հնդիրանական և հունական բառերի հետ համեմատելուն խանգարում են մի շարք հանգամանքներ: Հնդկական և հունական բառերի՝ Մերինգերի և Շուլցի կատարած համեմատությունը մերժվում է հատկապես Զոմմերի կողմից. դրա հիման վրա հունարենի ստուգաբանական բառարանի հեղինակ Ֆրիսկը այն համարում է անհամոզիչ³: Հնդիրանական ձևերը Յ. Պոկոռնու բառարանում (IEW, 1, էջ 930) բերվում են հունական հիշ-

¹ Հոդվածում կիրառված են հետևյալ համառոտագրությունները.

ՀԱԲ— Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1—7, Երևան, 1926—1935 (2-րդ հրատ. 1—4, 1971—1979):

MSL—Memoire de la Société de Linguistique de Paris.

IEW—J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern und München, 1—2, 1959—1969:

² Հ. Պեդերսեն, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 143:

³ H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, 1, Heidelberg, 1960, էջ 741.

յալ բառից միանգամայն անկախ՝ *(s)keng- արմատի տակ՝ համեմատովելով հուն. σκάζω «կաղալ» և գերմանական *skanka- «ազդր, ազդուսկր» ձևերի հետ. ենթադրվում է *skǝg̃ti-> *skák-thi-(-thi-ն asthi- «ոսկր» ձևի ազդեցությամբ)>sákthi- զարգացում: Այս դեպքում հայերենը բառը չի կարող համեմատվել հնդիրանական ձևերի հետ, որովհետև *(s)keng- արմատը և նրանից կազմված *skǝg̃ti- ձևը չեն կարող տալ ազդր կամ ասուր: Ազդր-ը դժվար է ուղղակիորեն համեմատել նաև հուն. ἰσχύιον -ի հետ: Այս պայմաններում մնում է փնտրել հայերեն բառի այլ աղբյուր:

Հայերեն ազդր բառի ծագումը պարզաբանելուն օգնում են հ.-ե. *ost(h)- «ոսկր» արմատին վերագրվող կելտական և հունական որոշ ձևեր, որոնց համար վերականգնում են *-bho-ով կազմություն՝ *ost-bho->*ozbho-. հմմտ. հ. իռլ. odb, կիթր. oddf «խիլթ», հուն. ὀσφύς «ազդր»: Հայերենին իմաստով առանձնապես մոտ է հուն. բառը, որ կարող էր ծագել նաև *ost-g^hhu- նախաձևից: Այս դեպքում հնարավոր է հայերենի համար վերականգնել մի առ՝ *-dh- աճականով սկզբնաձև՝ *ost-dh-ur>*ozdhur> ազդր:

Այս

Այս արմատը դեռևս 5-րդ դարից գործածված է հայ մատենագրության մեջ թե որպես անկախ բառ և թե բարդությունների ու ածանցումների կազմում: Հանդիպում է նաև բարբառներում: Տարածված իմաստն է «չար ոգի, դև», բայց առկա է նաև «բամի, փշյուն» իմաստը, որ հաստատվում է Ծղնիկի վկայությամբ. «Յորժամ մեք ասեմք, թէ սիբ շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ»:

Ստուգաբանության եղած փորձերը կարելի է բաժանել երեք խմբի. 1) բխեցում սեմական աղբյուրից (?). 2) համեմատություն հ. հնդկ. ásurā-, ավեստ. ahura- բառերի հետ. 3) համեմատություն էտրուսկ. ais «աստված» բառի հետ: Առաջին և երրորդ փորձերը առայժմ մնում են միայն ենթադրություններ՝ առանց հաստատվելու համապատասխան փաստերով (չի մատնանշվում բառի կոնկրետ սեմական աղբյուրը, պատմական հիմքեր չեն տրվում էտրուսկերենի հետ ունեցած կապը հիմնավորելու համար): Երկրորդ փորձը կարող էր մոտ լինել ճշմարտությանը, եթե ավելի որոշակիորեն մեկնաբանվեին հայ-արիական համապատասխանության բուն ուղիները. այն ավելի շատ հիմնվում է նմանահնչության, քան գիտական լուրջ կովանների վրա:

Հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության արդի փուլում հնարավոր է ավելի որոշակի պատասխան տալ այս-ի ծագման հարցին: Ամենայն հավանականությամբ այս-ը ծագում է հ.-ե. *ansu- (*ǵsu-) «ոգի, դև» նախաձևի *ansu- կամ *ansu- ածանցյալից. ինչպես հայտնի է, *ns, *ms կապակցությունները հայերենում տալիս են u [հմմտ. ամիս, -ոյ (*ǵmēns-os)] լատ. mensis -ի կողքին և միս (*mēmsō-)՝ գոթ. mlmz-ի ու հ. պրուս. mensā կողքին], իսկ *-l-ն հաճախ ենթարկվում է դրափոխության a+բաղաձայն կապակցությունից հետո [հմմտ. այլ (*alio-)] լատ. *alius-ի կողքին]: Հ.-ե. *ansu-ից են՝ հ. հնդկ. ásu-ra- «ոգի, աստվածություն», Asura «դև, աստծու հակառակորդ», ավեստ. ahura- «աստ-

ված», գերմ. *ansuz «աստված», Հետազոտողները (Հմմտ. IEW, 1, էջ 48) հակված են *ansu-ն կապելու *an(ə)- «շնչել» արմատի հետ, որ հաստատվում է հայ. այս բառի պահպանած երկու իմաստներով:

Ավելորդ շենք համարում նշել, որ Օ. Սեմերենյին հ.-ե. *ansu արմատից է բխեցնում նաև խեթ. ḫammaša «փոքր երեխա», լուվ. ḫamša-, հիեր. լուվ. ḫamaša-, լիդ. eša- «թոռ», այլև խեթ. ḫaš- «ծնել» բառերը, սակայն, հընդվորդական հիշյալ արմատի ակնհայտ կրոնական բնույթը այս համեմատությունը դարձնում է կասկածելի:

Անք (անուք)

Այժմ միայն անուք ձևով գործածվող այս բառը վկայված է նաև անք ու անդ ձևերով, ընդ որում առանց ու-ի ձևերն արդարանում են բարբառային տվյալներով: Ան(ու)ք բառը մատենագրության մեջ հիշատակված է ո ու ի հոլովումներով և ունի «թևատակ» իմաստը: Բարբառներում հանդիպում են նաև «գիրկ», «ուս, կոնակ», «տրցակ, կապոց», «թևատակի բեռի կամ կրծքին առնված բեռի քանակություն» իմաստները: Ե՛վ գրաբարում և՛ բարբառներում այս արմատից կազմվել են բայական և անվանական ձևեր՝ անքել «թևի տակ առնել», անքանոց, անքանոցիկ, անքատակ, անքմէջ:

Բառի ստուգաբանության՝ ուշադրության արժանի միակ փորձը պատկանում է Ս. Բուզգեին, որ համեմատում է այն հ. հնդկ. ākṣa-, հուն. ἄξων, լատ. axis, հ. վ. գերմ. ahsa, հ. սլավ. ось «առանցք» բառերի հետ՝ նշելով լատ. āxilla, հ. վ. գերմ. uohsana «անթատակ» իմաստային զուգահեռները և -ուք-ը համարելով մասնիկ: Այս ստուգաբանությունը չի արդարանում ոչ հնչյունապես և ոչ ձևաբանորեն (–ուք մասնիկի առանձնացումը չի հիմնավորված, բերված օրինակներն անհավաստի են):

Անք բառը ակնհայտ զուգահեռներ ունի բալթիական լեզուներում՝ լիտվ. aŋtis, նախածանցով՝ už-aŋtis «անութ, անթատակ» (առանց նախածանցի՝ նաև «կուրծք, գիրկ»), լատվ. uōts, uōte «խոռոչ, փոս, խորություն», azuōts «անթատակ»: Բալթիական բառերը չունեն հավաստի ստուգաբանություն⁴:

Լիտվերենն ունի -i-ով հիմք, որ ավանդված է նաև հայերենի թեք հոլովներում (-ո-ի կողքին): Կարելի է վերականգնել *anti-s նախաձևը, որ հայերենի դեպքում պետք է ունենար *anthi-s տարբերակը, եթե անդ ձևը նախնական չէ: Անուք ձևի ու-ն պետք է համարել թեք հոլովների հիման վրա (անքի, յանքի, անքով) կատարված համաբանական վերականգնում:

Անքեղ

Անքեղ «տաք մոխիր» բառը հայ մատենագրության մեջ հանդիպում է 5-րդ դարից սկսած և լայն տարածում ունի բարբառներում: Հնում գործածվել է անքեղ հարկանել «կրակը մոխրի տակ թաղել» արտահայտությունը: Բարբառներում նույն իմաստով առկա է անքեղել բայը: Հ. Աճառյանը (ՀԱԲ,

⁴ Հմմտ. E. Fraenkel, Litauisches etymologisches Wörterbuch, I, Göttingen, 1962, էջ 12:

1², էջ 194) համարում է կովկասյան լեզուներից փոխառյալ բառ՝ նկատի ունենալով վրաց. anteba «կրակ վառել, հրահրել, բորբոքել», antebuli «վառած» բառերը: Միաժամանակ նա պատահական է համարում անթեղ բառի նմանությունը հուն. αἰθάλη «մուր», αἶθω «վառել», ἀνθραξ «ածուխ» բառերին: Գ. Ղափանցյանը այս բառերին միացնում է խեթ. ant- «տար» բառը՝ հայերեն, վրացերեն և, թերևս, հունարեն բառերը համարելով «փոքրասիական ծագում» ունեցող⁵: Հայերեն, վրացերեն և հունարեն բառերի նմանությունը նշել է նաև Հ. Ֆոգտը⁶: Մենք նախապես սրանք համարել ենք հին շփումների (կոնտակտների) արդյունք⁷: Հունարենի ստուգաբանական բառարանները նշում են այս նմանությունները՝ հուն. ἀνθραξ-ի ծագումը համարելով ոչ պարզ⁸: Սրա հետ կապ չունեն Ն. Աճառյանի նշած αἰθάλη, αἶθω բառերը, որոնք ծագում են հ.-ե. *ai-dh- «այրել» հիմքից (IEW, 1, էջ 11):

Այժմ մենք հակված ենք հայ. անթեղ բառին տալու բոլորովին այլ մեկնաբանություն: Բանալին տարիս է հայ. թեղ «դեպ, շեղ, կույտ» բառը, որ նույնպես հանդիպում է հին մատենագրության մեջ 5-րդ դարից սկսած և լայն տարածում ունի բարբառներում. համապատասխանաբար առկա է թեղել «դիզել (ցորենի մասին)» բայը (հմմտ. նաև թեղ տալ «հավաքել (հարզը կալի մեջ)»): Ան-ը պետք է համարել «համա-» իմաստով նախամասնիկ՝ հավանաբար հ.-ե. *sm- «համա-, միասին» նախածեղից (հմմտ. թերևս, անտառ <*sm+daru- «ծառ»): Անթեղ-ի սկզբնական իմաստը պետք է լիներ «ընդհանուր՝ ի մի հավաքված (մոխրա)կույտ»: Եթե այս մերձեցումը ճիշտ է, ապա անթեղ բառի նմանությունը վրացերեն, հունարեն և խեթերեն բառերին պետք է համարել պատահական:

Առայժմ պարզ չէ նաև թեղ բառի ծագումը. համեմատությունները իրանական և սեմական բառերի հետ (ՂԱԲ, 22, էջ 171) կասկածելի են: Թերևս թեղ-ը համեմատելի է հ. հնդկ. sthāla «հողակույտ» բառի հետ, որ ծագում է *stel- «դնել, կանգնեցնել» արմատից. այս դեպքում էլ պետք է բացատրել *s-ի անկումը ((st/lt հերթապալություն՝ շարժական s-ո՞վ):

Ատայան

Այս բառը հանդիպում է Վահան Գողթնացու վկայաբանության մեջ՝ հետևյալ հատվածում. «Անատաձեռն տրօք բաշխելով նոցա դահեկանս զտարտոյն ատայանսն ևս»⁹: Հրատարակիչը համարում է արաբ. փոխառություն՝ իտիլյան «պարտք» բառից: «Առձեռն բառարանում» ընդունվում է այս կարծիքը, և բառիմաստը մեկնվում է «հարկ»:

⁵ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 163—164:

⁶ H. Vogt, „Norsk Tidsskrift for Sprogvidenskab“, 9, էջ 333:

⁷ Գ. Զաճուկյան, Հայերենը և հնդկարտական հին լեզուները, Երևան, 1970, էջ 157—158, 160:

⁸ Հմմտ. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch. I, Heidelberg, 1960, էջ 100. P. Chantraine, Dictionnaire étymologique de la langue grecque. I, Paris, 1968, էջ 90:

⁹ Սոփերք հայկականք, ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 14:

Հ. Աճառյանը (ՀԱՔ, 12, էջ 286), մեկնաբանելով այս կարծիքը, գրում է. «Իմա՛ արաբ. dayn «պարտք», որ չէ հարմար»: Նա ևս տալիս է միևնույն՝ «հարկ, տուրք» բացատրությունը: Դժվար չէ փարատել Հ. Աճառյանի հարուցած կասկածը, եթե նկատի ունենանք որ արաբական բառն առնված է հոգով՝ ad-dayn ձևով: Ավելի քիչ հավանական է բառի համար իրանական ծագում ենթադրելը. հմմտ. իրան. *ati-ayana-> միջին պարսկերեն atēn «եկամուտ»¹¹:

Արգանդ, արգահատել

Երկու բառերն էլ հանդիպում են մատենագրության մեջ 5-րդ դարից սկսած: Արգանդ բառի ստուգաբանություններից Հ. Աճառյանը (ՀԱՔ, 12, էջ 303) ամենահավաստին է համարում համեմատությունը կիմր. arfed (ar-pet) «ծոց, գիրկ» և գաել. arcuinn «կովի կուրծ» (վերջինս կասկածելի) բառերի հետ, որ առաջարկել է է. Լիդենը: Այս ստուգաբանությունն ընդունվել է Ա. Վալդեի և Յ. Պոկոռնու բառարանում *ark!- արմատի տակ: Հ. Աճառյանը արգանդ և արգահատել «խղճալ, կարեկցել» բառերի համար վերականգնում է միևնույն արգ արմատը, ընդ որում արգահատել-ի արգ-ը մեկնում է «փոր, աղիք»՝ որպես օրինակ բերելով աղիք բառից կազմված աղեխաբշ, աղեկեզ, աղիոզոճ և այլն համանիշները: Ավելորդ չէ նշել, որ է. Լիդենի ստուգաբանությունը Ա. Մեյեն ընդունել է կասկածով, իսկ Յ. Պոկոռնին հնդեվրոպական բառարանի նոր հրատարակության մեջ հանել է *ark!- արմատը որպես անհավաստի:

Եթե ճիշտ է արգ արմատի համար Հ. Աճառյանի նշած «փոր, աղիք» իմաստը, ապա այն ծագում է հ.-և. *oreu-,*ɛreu- (կամ *arvā) «աղիք» (?) արմատից, որի մյուս ժառանգներն են հուն օրօα «աղիք» և լատ. arvīna «ճարպ» (*«աղեճարպ») բառերը: Յ. Պոկոռնին կասկածով է վերականգնում «աղիք» սկզբնական իմաստը: Սակայն հայերեն բառերի և մանավանդ արգահատել բառի ստուգաբանությունը հիմք է տալիս հաստատելու հիշյալ վերականգնումը և նույնիսկ ավելացնելու «փոր, որովայն» առումները: Հետաքրքրական է նշել, որ հակում կա հուն. բառը կապելու «փորել» բառի հետ և նրա համար վերականգնելու սկզբնական «անցք» իմաստը¹²: Այս դեպքում իմաստային հարաբերությունն այնպիսին է, ինչպիսին փոր և փորել բառերինը: Ավելորդ չենք համարում նշել, որ կարող է հ.-և. *oreu- արմատին պատկանել նաև որովայն բառը, որ սովորաբար հատկացնում են *kreper- կամ *preper- արմատներին: Թերևս *oreu-ին պետք է հատկացնել նաև որկոր-ը, որ բխեցնում են *k!er-k!or- ձևից և որի մեջ սկզբնական *k!- -ի անկումը դժվար բացատրելի է:

Գորով

5-րդ դարից հայ մատենագրության մեջ հանդիպող այս բառը շուրջ համարյա 100 և կորով բա-

¹⁰ Հմմտ. Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, 1, 1944, էջ 458—463:

¹¹ Իրան. բառերի համար տե՛ս А. Г. Периханян, Сасанидский судебник, Ереван, 1973, էջ 442:

¹² Н. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, II, Heidelberg, 1970, էջ 431:

ների հետ կապելու փորձերը (ՆՃԲ, Հյունքարպեյնտյան), Տերփիշյանի համեմատությունը հ. հնդկ. *har-* «սիրել, գերմ. *gern* «հաճելի», հուն. *χαίρειν* «ուրախ լինել» բառերի հետ անընդունելի է հնչյունական պատճառներով. հ. հնդկ. *hāryati* «սիրում է, ցանկանում է, պահանջում է» բայը ցեղակից ավեստ. *zara-* «ձգտում, նպատակ» բառի հետ միասին ենթադրում է քմայնացած *g'h, մինչդեռ հայերենն ունի չքմայնացած նախաբաղաձայն՝ գ (*gh, g'h): Անընդունելի է նաև Կարստի համեմատությունը շումեր. *gur* «շողոմել, փայփայել» արմատի հետ, թեև անհնար չէ գորով-ի կապը համեմատ կրկնավոր գուրգուրամ հայ. բայի հետ:

Հայերենի բառի ծագումը բացատրելու բանալի է տալիս պրուս. *garrewingi* «կրքոտ, ջերմ» բառը, որ նախկինում համարում էին լեհական փոխառություն (*gorz* «ուժեղ ցանկություն»), սակայն այժմ հակված են համարելու բնիկ բառ՝ հ.-ե. *g^hher- «տաք, ջերմ» արմատից, որտեղից հայ. ջեռ, ջեռ, ջեռմ, ջեռմե¹³:

Պրուսական բառի -ew-ը (հմմտ. հայ.-ով) զուգահեռ ունի սլավոնական և գերմանական լեզուներում [հմմտ. հ. սլավ. *жеравыи* «ջերմ, տաք», հ. չեխ. *žeravie* «շիկացած, այրող», հ. հյուս. *gorr* (*garwa*), *ger*, *görr* «պատրաստ, կատարյալ» և այլն]: Հ.-ե. *g^hher-ի սկզբնական ֆիզիկական իմաստից անցումը հոգևոր իմաստի ցույց են տալիս նաև բալթիական և սլավոնական լեզուները (հմմտ. լիտվ. *gāras* «շոգի. ուժեղ ցանկություն», *garuoti* «շոգիանալ. ուժգին ցանկանալ», ռուս. *горя* «վիշտ», *горевать* «վշտանալ»՝ *гореть* «այրվել»-ի կողքին):

եղաբ

Եղաբ «լաց, կոծ» արմատը, որ առանձին գործածված հանդիպում է միայն Հին հայկազյան բառգրքում, ավելի ուշ խառնվել է եղեռն բառի հետ և ստացել եղեռ ձևը. եղաբամայր ձևի հետ միասին հանդիպում է եղեռամայր ձևը, իսկ եղեռական, եղեռեզություն բառերը գործածվում են միայն եղեռն ունեցող բաղադրիչով:

Ստուգաբանության փորձերը գերազանցապես ելնում են եղեռ- և եղեռն ձևերի կապված լինելու կանխադրույթից: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 22, էջ 15) իրավամբ մերժում է նաև *երեբգ > եղեբգ մեկնությունը (Մեյն) և եղեռ-ը եղեբգ-ի հետ կապելու (Մառ) փորձերը:

Ամենից ավելի հավանական է եղաբ-ի հնդեվրոպական ծագումը՝ *lā- բնաձայն արմատից, մանավանդ եթե այս արմատից է գալիս լամ բայը (ըստ այլ կարծիքի՝ *plakmi ձևից, հմմտ. ռուս. *плакать*). հայ բառին իմաստով ամենից ավելի մոտ է լատ. *lamentum*-ը «լաց, կոծ, ողբ», ձևով՝ հուն. *λῆρος* -ը («անհեթեթություն»). եույն արմատից է համարվում հայ. լոբ-ը, որ համեմատվում է հուն. *λόρος* «որոր» բառի հետ: Հայ. բառի նախաձևը պիտի լիներ *lā-ro կամ *lā-ro-. Վր հերթագայություն համար հմմտ. լերկ և ողորկ:

¹³ В. Н. Топоров, Пруссский язык, 2, с. 166—168.

Զամբուռ (զամպուռ)

«Հայբուսակը» (Վենետիկ, 1895, էջ 168), բերելով այս բառը, վկայակոչում է «Հին բժշկարանը», որ տալիս է արաբ. *هضأ*, լատ. *thymus*, ֆրանս. *thym* համարժեքները: Սրա հիման վրա Հ. Աճառյանը (ՀԱԲ, 22, էջ 77) մեկնում է «մի տեսակ խոտ՝ վաղամեռուկ, ձիածոթրին», այլև նշում է, որ Արթինյանը նույնացնում է *origanum*-ի, Տիրացույանը *thymu serpillum* L-ի հետ: Հ. Աճառյանը մերժում է Արթինյանի կարծիքը բառի՝ հուն. *θύμρα* «ծոթոր» հոմանիշից ծագելու մասին որպես ձևով անհարմար և, միաժամանակ, որպես «ձևով հարմար, բայց նշանակութամբ» տարբեր բառ հիշատակում է արաբ *zambur*-ը «չինարի նման մի տեսակ ծառ կամ քաղցր թուզ» (Կամուս, թրք. թրգմ., Ա, էջ 880):

Հայ. բառը ակնհայտ զուգահեռ ունի արամեերեն *zambūrā* (*zabburā*) բառի ասոր. *zambūru* «ծոթրին, *thymus*» տարբերակի մեջ, որը և հայերեն բառի աղբյուրը պետք է համարել՝ անմիջաբար կամ, միջնորդված կերպով¹⁴: Ավելորդ չենք համարում նշել, որ արամեական ծագում ունի նաև ակկադ. *zamburu* նույնիմաստ բառը¹⁵:

Խաղող

Խաղող, -ոյ, -աց բառը ավանդված է հայ հին մատենագրության մեջ 5-րդ դարից սկսած և լայն տարածում ունի բարբառներում: Ստուգաբանության փորձերը մեծ մասամբ ակնհայտորեն անհավաստի են, հատկապես համեմատությունը հայ. խաղ, կակուղ բառերի և վրաց. *qurjeni* «խաղող» բառի հետ: Սակայն ուշադրություն է գրավում Պ. դը Լագարդի և հետագայում Հ. Արշելի հիշատակած ղպտերեն (*h*)*aloli* համանիշը, որի կապը հայերենի հետ անբացատրելի է. հայերենը ղպտերենից չէր կարող անմիջաբար փոխառություն կնքել: Այժմ մենք ունենք դրանց կապող օղակը պարզելու հնարավորություն. այդպիսին է խուռ. *haluli* «մի տեսակ պտուղ» բառը¹⁶, որի իմաստը դժվար չէ հայերենի միջոցով ճշտել: Հայերեն և թերևս ղպտերեն բառերի աղբյուրը կարող էր լինել խուռերենը՝ միջնորդված կամ անմիջաբար: Հնարավոր է, իհարկե, որ մշակութային այս բառի բուն աղբյուրը մի ուրիշ լեզու լինի, բայց բոլոր դեպքերում էլ կապը ակնհայտ է: Հնարավոր է ենթադրել, որ խուռերեն բառը համարժեք է ունեցել ցեղակից ուրարտերենում, որտեղից և անցել է հայերենին: Ծիշտ է, ուրարտերենում կա *halūli* բառը, բայց այն հակված են թարգմանելու, թեև կասկածով, որպես «ծես, արարողություն»: Վերևի ենթադրության ճիշտ լինելու դեպքում հարկավոր է կամ ենթադրել մի այլ համանուն, կամ թերևս վերանայել *haluli* բառի իմաստը, մանավանդ որ այդ բառի հետ զուգորդվող *ašhu-* բառի «կատարել» իմաստը կասկածելի է, *gudi* բառինը՝ անհայտ: Հետաքրքրական է նշել, որ արձանագրություններից մեկում *haluli* բառը հանդիպում է մի կոնտեքստում, որտեղ

¹⁴ Ասորերենի համար հմտ. C. Brockelmann, *Lexicon syriacum*, 1928, էջ 138.

¹⁵ W. von Soden, *Akkadisches Handwörterbuch*, III, Wiesbaden, 1981, էջ 1508.

¹⁶ Հմտ. V. Haas, G. Wilhelm, *Zum hurritischen Lexikon*, „Orientalia“, 5, 41, էջ 90.

նրանից մի քանի բառ առաջ կրված է $G\dot{I}\dot{S}$ uldi (այլ տեղում՝ uduli) «խաշ-
ղողի այգի» բառը (հմմտ. հայ. տղի «խաղողի որթ», ուտ. tul «խաղող»)։

Խաշ

«Հայբուսակում» խաշ և խաշղն ձևերով հանդիպող այս բառը մեկնաբան-
վում է որպես «խոռն, մի տեսակ վայրի դաղձ (mentha pulegium L.)»։ Բառն
առնված է Գաղիանոսի աշխատության թարգմանությունից (10-րդ դար)։ Նոր
հայկազյան բառգրքում մեկնվում է որպես «լուաղեղ» կամ «խաշնդեղ», այ-
սինքն՝ կապվում է խաշնդեղ-ի խաշն բաղադրիչի հետ։ Լ. Աճառյանը (ՀԱԲ,
2², էջ 333) մատնանշում է պրսկ. xāš «շյուղ» բառի հետ ունեցած պատա-
հական նմանությունը։

Հայերեն խաշ բառի աղբյուրը ասոր. hāšā «ծոթոր, ծոթրին» բառն է
լարամ. hāsai, ակկադ. hasu(m), արար. hāsā]։ Հագիվ թեխաշը կապ ունի
խաշսդղ բառի խաշն բաղադրիչի հետ, որ սովորաբար նույնացնում են խաշն
«ոչխար» բառի հետ։ Թերևս հնարավոր է ենթադրել բաղադրություն կամ ժո-
ղովրդական ստուգաբանություն։

Կեղտ

5-րդ դարից գոյականական և ածականական գործածությամբ հանդիպող
(«1. կեղտ. 2. կեղտոտ») և բարբառներում տարածված այս բառը շունի հա-
վաստի ստուգաբանություն։ Տարբեր հեղինակների նշած հնդեվրոպական զու-
գահեռները, որոնք ծագում են *g^hel- «ծակել, ցավ», *kel- «բիծ»,
*sk^{er}(d-) «կղկղանք, կեղտ» և այլ արմատներից, անհավաստի են հնչյու-
նական կամ իմաստալին տեսակետից (հմմտ. ՀԱԲ, 2², էջ 570—571)։ Ան-
հավանական են նաև եղտ, աղտ բառերի հետ կապելու փորձերը։

Կեղտ բառը ակնհայտ զուգահեռներ ունի գերմանական՝ մ. նիդեռլ.
klatten «կեղտոտել», ն. գերմ. բրբռ. Klatz «կեղտի բիծ», ստ. գերմ. kladde
«կեղտի բիծ» և այլ բառերի մեջ, որոնք կասկածով հատկացնում են հ.-ե.
*gel- «գեղ(վ)ել, գունդ» արմատին, և որոնց հ.-ե. ծագումը հաստատվում է
հայերենով։ Հայ. կեղտ-ը ենթադրում է *gel-d- նախաձև։

Կողոփոց

Այս բառը հանդիպում է միայն մեկ անգամ Հովհաննես Ոսկեբերանի եր-
կերից մեկի թարգմանության մեջ։ «Իբրև զլիցս և զկողոփոցս հաշուին զա-
մենայն»¹⁷։ Նոր հայկազյան բառգրքում մեկնվում է որպես «կունտ ծայր
ոսկերաց՝ խաղալիք տղայոց», որի հիման վրա Լ. Աճառյանը (ՀԱԲ, 2², էջ
623) բացատրում է «վեզ, տղայոց խաղալու կոճ»։ Նոր հայկազյան բառգրքի
հեղինակները հակված են բխեցնելու հուն. κολοφί «գուլխ» բառից և միա-
ժամանակ տալիս են թուրք. topuz «կոպալ» համանիշը։ Թարգմանության
մոտավորությունը մեզ հիմք է տալիս հանգելու այն եզրակացության, որ

¹⁷ Յովհաննես, Ոսկեբերանի Յաւետարանագիրն Մատթեոս, Բ, Վենետիկ, 1826, էջ 22։

մենք գործ ունենք հուն. κολοφών, -ώνος «գագաթ, գնդակ (գիմնաստիկական վարժությունների մի պիտույք)» բառի հայացված ձևի հետ:

Նուռն

5-րդ դարից հանդիպող և բարբառներում լայն տարածված այս բառը շունի հավաստի ստուգաբանություն: Հաճախակի վկայակոչվող մ. պրսկ. anḫ և պրսկ. nar համանիշները շեն կարող հայերենի անմիջական աղբյուրը լինել:

Նուռն բառը ակնհայտորեն փոխառություն է առաջավոր Ասիայի որևէ հին լեզվից. հմմտ. ակկադ. nurimdu և հատկապես նրանից փոխառյալ խուռ. nūranti համարժեքները. հնարավոր է ենթադրել հատկապես ուրարտական աղբյուր, որ մոտ պետք է լիներ խուռական ձևին, բայց գրավոր աղբյուրներում չի ավանդվել: Փոխառությունը հին պետք է եղած լինի՝ վերջին -ti-ի անկումով և nuran-ի նուռն, սեռ. նռան (<nuran-) սովորական ձևափոխություն:

Քուֆ

Հայ հին մատենագրության մեջ բավականին հաճախադեպ քուֆ, -ոյ «հանցավորներին ծեծելու հատուկ փշոտ գավազան» բառը շունի հավաստի ստուգաբանություն: Տերվիշյանի և Հյունքարպիյենտյանի ստուգաբանական փորձերը (համեմատությունը հ. հնդկ. kas- «քերել, քսել» արմատի և հայ. քուֆալ «հառաչել, հեծել» բայի հետ) չի կարելի լուրջ համարել:

Քուֆ բառը ակնհայտորեն հնդկփրոպական ծագում ունի և գաղիս է *kāu- «խփել» արմատի ստորին ձայնդարձը ներկայացնող *kū- ձևից՝ *-ko- ածանցական մասնիկով. հմմտ. լատ. cū 'ō, -ere «խփել, ծեծել. կոփել», caudex (cōdex) «ցողուն. կոճղ, գերան», լիտվ. kauti «խփել, սպանել», kūjis «մուրճ» և այլն: Հայերենի *-ko- ածանցը կանգնած է յոռանձնակի: Կազմության ձևի համար հմմտ. քուֆ, -ոյ «ողբ, հառաչանք» <*kū-ko-՝ *kāu-, *kēu-, *kū- «ճշալ» արմատից:

Г. Б. ДЖАУКЯН—Этимологии. — В статье, дается этимология следующих армянских слов: azdr „бедро“, ays „злой дух“, an(u)t^c „подмышка“, ant^cei „горячий пепел“, atayan „налог“, argand „матка“, argahatel „жалеть“, gorov „умиление“, eġar „плач“, zambut „тимьян“, xaġol „виноград“, xaš „тимьян“, keġt „грязь“, koġop^coc^c „бабка“, niġn гранат“, k^cuk^c „батог“.